ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ՆՈՐ ԵՐԶՆԿԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանով հաստատված հավելվածի 177-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշման հավելվածի 4-րդ և 22-րդ կետերի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի N 517-Ա որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 59-րդ կետը և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 393-Ա որոշումը՝ **որոշում եմ.**

1. Ստեղծել աուդիտորական առաջադրանքի աշխատանքային խումբ հետևյալ կազմով և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի պահպանման ծախսերում գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին գործուղել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն *(այսուհետ՝ կազմակերպություն)* 2019 թվականի նոյեմբերի 11-ից մինչև նոյեմբերի 15-ը ներառյալ կազմակերպությունում ֆինանսական աուդիտ իրականացնելու նպատակով՝

1) ***Կոմիտաս Հունանյան*** - խմբի ղեկավար, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի պետ,

2) ***Անահիտ Սրբեփանյան*** - անդամ, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ավագ աուդիտոր,

3) ***Արգամ Առաքելյան*** - անդամ, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ավագ աուդիտոր,

4) ***Արամ Գրիգորյան*** - անդամ, մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի ավագ աուդիտոր:

2. Աուդիտորական խմբին՝ աուդիտորական առաջադրանքը իրականացնել 2017 և 2018 թվականների հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության և դրանց կիրառելի հիմունքներին

համապատասխանության, կատարված փաստացի և դրամարկղային ծախսերի հիմնավորվածության, միավորի հաշվեկշռում գտնվող գույքի *(կարածքի)* վարձակալությամբ տրամադրման, վարձավճարների հաշվարկման և գանձման գործընթացների, կազմակերպության կողմից լիազոր մարմնին ներկայացված կոմպլեկտավորման վերաբերյալ տվյալների հավաստիության, կազմակերպության ակտիվների և պարտավորությունների ամենամյա գույքագրման գործընթացի, գնման ընթացակարգերի արձանագրություններում տեղ գտած տեղեկությունների, պայմանագրով կողմերի ստանձնած պարտավորությունների պայմանագրին համապատասխանության, աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների հաշվարկման և վճարման գործընթացի գնահատման նպատակով:

3. Սույն որոշման 1-ին կետով գործուղված քաղաքացիական ծառայողներին գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թվականի նոյեմբերի 07
ք. Հրազդան
N 244-Ա